Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն
«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

N 4-12/25-29

25.12.2025թ.

***Լիցենզիա ՔՊԼ-001139***

***Լիցենզիա ՔՊԼ-001434***

**Նախագծային կազմակերպություն՝** «Բլու Սթրիմ Սոլյուշնս» ՍՊԸ

**Տնօրեն՝** Հ. Դավթյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սիսիան քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգում

Երաշխավորվում է «Սիսիան քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 178992.78 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 1 ալբոմից

Գիրք 1- Նախահաշիվ

<u>Նախահաշիվ</u>

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման :
Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.46779 |
| - Մեքենաների շահագործում | 3.0576 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 11.2025թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1.0898 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 267138 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև՝ | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր: Վարչապետի հանձնարարականով իրականացվող ՛՛300 դպրոց և 500 մանկապարտեզ՛՛ ծրագրի շրջանակներում պատվիրատուի առաջադրանքով տվյալ աշխատանքների համար կազմվել է միայն նախահաշիվ:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախահաշվային գործակիցները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախահաշիվներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ**-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝ Ա. Հարությունյան

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» «NAXAGTSERI PORDZAQNNUTYUN» 06960002